

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարին	համար
սարկիսի	12 ֆր.
վեցամսեայ	7 "
Արսասահմանի	
համար սարկիսի	15 ֆր.
վեցամսեայ	8 "
Աւերիկայի	համար
սարկիսի	3 ռ.
վեցամսեայ	1.50 "

Իր սնունդուն տղը ու  
նույնի երեսին համար  
40 ամսին իսկ վերջին  
երեսին համար 20 ամս-  
քիս է, երեսին ա էլի  
սեղաններու համար  
20 0/0 զեղը կրնայ:

Վառիսայի համար ձեռ  
քի 10 ամսին է

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ԲԱՂՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՎՈՒԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ СТЕПАНЪ КАНАРИЯНЪ

Պուշկարին եւ զրամ  
դրակն խմբագրութեան  
հասցեին

Редакция на вѣстникъ  
"Шаржумъ"  
Варна

Redaction du journal  
"Charjoun"  
Varna (Bulgarie)

Պուշկարին համար  
ձեռքի

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար  
ձեռքի

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեմ  
տրուիք

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՐՎԱՐ ԵՒ ԿՐԻՍՏՈՒԿ ՎՃԱՐՔԷ

## Ս. ԳՍԲԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒՆԿԱՐ ԿՍՈՒՎԱՐՈՒԹԻՒՆԷՆ ԵՐԱՆ-  
ԽԱՆՈՐԵԱՎ ՈՍՅՈՒՄ ԲՈՂՎԱԿԱՆ ՎԻՃԱ-  
ԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնելի փափաքողները կրնան  
իրեն գրել:  
Չար-Պորիս փողոց Վառնա

## ՕՐԻՆԱԿ ԱՌՆԵՆՔ

Հայ—թաթարական ընդհա-  
րուածները ամբողջ հայութեան  
առջեւ յատկորէն, անժխտելի-  
օրէն երեւան բերին նկարագրի  
հիմնական տարբերութիւնը որ  
գոյութիւն ունի Ռուսահայուն և  
Թրքահայուն միջեւ: Որքան ալ  
չաւալի ըլլան այդ ընդհարում-  
ները, որքան ահեղ ու կոպտե-  
ցուցիչ անոր պատճառած վնաս-  
ները, այնուամենայնիւ կարծես  
անհրաժեշտ էին անոնք, պար-  
զելու համար մեր աչքին առջեւ,  
թրքահայերուս բոլոր մեղկու-  
թիւնը, բոլոր անբնորոշակու-  
թիւնը, անճարակութիւնը կը  
ուելու, մաքառելու գործին մէջ:

Արդարեւ, երեւակայեցէք թէ  
ի՞նչ պիտի ըլլար կովկասի հա-  
յութեան—և միեւնոյն ատեն ամ-  
բողջ հայութեան—վիճակը, ե-  
թէ այս վերջին մէկ տարուան  
ընդհարումներու ատեն, նոյնքան  
մեղք. նոյնքան անկարող, ան-  
պատրաստ ըլլար անին քննապաշտ-  
պանութեան, որքան եղաւ թր-  
քահայը իր ազէտալի տարինե-  
րու փոխորկալից շրջանին մէջ:  
Ամէն քիչ մը խելք ունեցող հայ  
իսկոյն պիտի տեսնէ որ, կովկա-  
սահայն ալ ջարդուելով, կողոպ-  
տուելով, հալածուելով, անօթի-  
անտէր մնալով, պիտի հասնէր  
այն ողբալի դրութեան, որուն  
մէջ կը գտնուի այսօր թրքա-  
հայը մասնաւորապէս բուն Հա-  
յաստանի հողին վրայ, սպարող  
թրքահայը:

Անկարելի է ուրանալ այս ճրջ-  
մարտութիւնը, և մենք պիտի

համարձակինք նոյն իսկ ըսել  
թէ հայ—թրքական ընդհա-  
րուածներու ատեն Ռուսահայ ժո-  
ղովրդին ցոյց տուած ընդդի-  
մութիւնը, միշտ փառաւոր ու  
յողթական կոխունները ամբողջ  
հայ ազգն է որ սպառնացող կո-  
րուստէն փրկեցին:

Իսկապէս, Յարիզմի պժգալի  
կառավարութիւնը շատ խորա-  
մանկ, շատ ազդուական ծրա-  
գիր մըն էր որ նիւթեց Հայու-  
թեան դէմ, և որ բարեբախտա-  
բար, իր ամբողջութեամբ ջուրն  
ինկաւ, շնորհիւ կովկասահա-  
յուն նկարագրի բարձրութեան,  
Յարիզմի գազան ներկայացու-  
ցիչները կարմիր Սոլովանին  
հետ ձեռք ձեռքի տուած թրք-  
ահայութիւնը հոգեւարքի մատ-  
նելէ յետոյ, տեսան որ հայ ազ-  
գին չի կրցան վճռական հար-  
ուած մը տալ, ընդհակառակը  
ան իրեն սպառնացող վտանգին  
դէմ աւելի սկսաւ արիւթիւն  
ցոյց տալ, իր սուսահայ եղբայ-  
րը շուտով ու աւելի եռանդով  
օգնութեան ձեռք մեկնեց անոր,  
ու կոխի տակաւ աւելի կուռ ու  
սպառնական դարձաւ, պէտք էր  
ուրեմն ռուսահայն ալ հասցնել  
այն դրութեան ուր ինկաւ թրք-  
ահայը: Յարիզմի պայտօնեա-  
նները խորհեցան որ թաթար վոհ-  
մակները հայոց վրայ արձակե-  
լով, կովկասահայն ալ այնքան  
գիւրութեամբ ու անմրմունջ զի  
զր պիտի երկնցնէ դահլիճներուն  
առջեւ, որքան թրքահայը:  
Բայց բռնաւորներու հաշիւը սը-  
խալ եղաւ, և կովկասահայը  
պէտք եղածէն աւելի փառաւոր  
դաս մը տուաւ այսօր թէ ցարիզ-  
մի պայտօնեաներուն և թէ թա-  
թար վայրենիներուն, որոնք  
այլիս հայթահարուած, անկա-  
րող գիւմանալու հայ քայքայու  
գնդակին, սարսափահար կրակը-  
սին փախուստ տալ ամէն կողմէ:

Ընթերցողը պէտք չէ կարծէ  
որ գիւմարութեան այս գործը  
մաս մը մարդոց կամ այս և այն  
կուսակցութեան գործն է: Ո՛չ:  
կովկասի հայ ժողովուրդը, ամ-  
բողջովին, իր առած դատաւա-  
րակութեամբ, իր սովորութիւ-  
ններով, իր նկարագրին շնորհիւ  
ինք իր ձեռքով իր գոյութիւնը  
փրկեց, իր ետեւէն քաշեց բե-  
րաւ անոնք, որոնք մասնաւորա-  
պէս հայ ազատագրութեան գոր-  
ծին նուիրուած են: Այսպէս ժո-  
ղովուրդ ու յիշատակական կազ-  
մակերպութիւնները զիրար հա-  
կցան, զիրար գտան, իրարու  
փարեցան ու միասին կուռի  
գաշտը ելան յողթականօրէն:

Ահա՛ օրինակելի դասը, որուն  
պէտք է հետեւինք մենք, Թրք-  
ահայերս, Պէտք չէ սպասել որ  
այս կամ այն յիշ. կուսակցու-  
թիւնը մեր փրկութեան գործն  
ապահովէ: Ժողովուրդը, թրք-  
ահայ, ինքն է որ պիտի կրու-  
ուի և իրեն հետ պիտի առնէ  
կուսակցութեան ուժերը, որոնց-  
մէ պիտի աշխատի ազատելու Հա-  
յաստանը որ մեր կրած աղէտնե-  
րը լոկ կուսակցութեանց սխալ  
սխտէմին հետեւանք չեն, ալ  
մանաւանդ մեր ազգովին անըն-  
գունակութեան, կուռելու ան-  
կարողութեան ու անպատրաս-  
տութեան:

## ՇՈՒՄ

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ  
ՊՈՏ. ԹՈՒՄԱՆԱՆԻՆ

Լըրութեան պարզ դէմքը  
բնաւ չը տեսնուի մին  
չեւ չը գործածուի:  
ՆԷՎՍՏՐԻ

Պատուելի,  
Ընկերական կեանքի բարոյազը-  
քերուն վրայ կան արձանագրուած  
չարք մը պահանջներ, գորս, ինչ-  
պէս կերելի. վճռած էք անգիտանալ  
եւ չը գործադրել յաւէտ: Ատոնք կը  
կուռին.—թոյլ տուէք ինձ ձեզ յի-  
շեցնել հակառակ արարողքս մը  
ըլլանուք եւ իմ անբարոյականիս  
մակդիրիս.—Ամօթ, խիպ եւ Պատ-  
կառանք: Ատոնցմէ եւ ո՛չ մէկը  
կար վրանիդ ատենօք՝ երբ ձեր ար-  
քերարը հովանիին ներքեւ ըլլալու  
զժախտութիւնը ունկիւնք, իսկ այ-  
սօր, որ այդ շրջանին եւ ներկային  
միջեւ ինկած է հսկայ անըրպետ մը—

չըջան մը՝ որու միջոցին ականատե-  
սեցիք ձեր շինած սուտ ու կեղծու-  
պատիր փառքին քարուքանդումը—  
եւ ոչ մէկ կերպով արեքփոխուած էք,  
այլ ընդհակառակը, տարիներու ընթաց-  
քին հետ, եւս առաւել կը միսթուիք  
անպատկառ լրբութեան անգրեւակա-  
յելի տիղմին մէջ:

Ասկէ շատ առաջներ արդէն դադ-  
րած էինք ձեզ հետ գործ ունենալէ՝  
փակած ըլլալով տապանիդ եւ գը-  
րելով վրան ինչ որ հարկ էր—ի՛նչ  
որ էիք, եղաք եւ էք: Թողած էինք  
որ այդ ինկածներու տապանին մէջ  
գտնէ՛ անվրդով մնաք, չըլլալով ձեզ  
պէս աստուածապաշտ եւ երկիւղած  
պատուելի մը որ՝ ինչպէս դուք ա-  
տեն մը մեր թշուառութիւնով կը  
հրճուէիք, մենք ալ նոյնպէս գա-  
լինք ու դիակնուղ շուրջ պար բըռ-  
նէինք, ի խրախճանս մեր յողթանա-  
կին:

Բայց, չեմ գիտեր ինչո՞ւ այս խա-  
ղաղութիւնը վրդովեց ձեզ եւ զուր-  
նիդ տապանին տակէն դուրս հանած  
նորէն սկսաք անբնութեան ան-  
ճառելի ցուցադրումը: Ձեմ գիտեր  
ինչո՞ւ ատենէ մը ի վեր կը պոռաք,  
կը կանչուըռտէք, սինիք ժպիտներ  
կը նետէք չորս կողմ՝ որովհետեւ,  
դիակնուղ բոյրը հարկադրած էր մեզ  
միանակ թողուլ եւ խորշաքով հեռու  
թողիլ ձեզմէ: Ի՛նչ, յողթանակ  
կարծեցիք շուրջը շրջիդ տիրող ա-  
մայութիւնը, յողթանակ կարծեցիք՝  
որ մեր վեհանձնութիւնը թելադրած  
էր մեզ դիակնիդ հանդարտ թողուլ  
ու գայն չը քաշկոտել:

Ձե՞ք գիտեր թէ որքան կը քար-  
շինք—ընկերներս, ես, եւ բոլոր  
անոնք՝ որ ծանօթ են հոյակապ դըր-  
ուագներուդ.—երբ անուններդ, խօս-  
քերներդ լսենք, չէ՞ք գիտեր այս:  
Գիտեմ, պատուելի՛, մեր համեստ  
լուրթիւնն է որ քաջայերական հո-  
վեր կուտայ ձեզ եւ առիթ՝ մինչեւ  
օրս կատարած խայտառակութեանց  
է՛ն անտպը գործելու:

Ուզեցի նորէն համբերել, բայց,  
չէ՛, ա՛լ չափն ու սահմանը անցաք  
եւ, գերագոյն ճիգով մըն է՝ որ նեղ  
մը նորէն պիտի մտնեամ՝ պարզելու  
ձեր նկարագրային արտանիշերը եւ  
ցոյց տալու հողիւնուդ բովանդակ ա-  
պականութիւնը:

Վերջին օրերս ձեռքս անցաւ ձեր  
տպագրած «Ազգային երգերու» ժո-  
ղովածուն, որու տպագրական հոյա-  
կապութեան համար հարկ է որ գեղ-  
արուեստական ակադեմիայի մը զը-  
կէք եւ իւրաքանչիւր գնողին ալ  
ակնոց մը:

Ձեր «Արեւելեան խնդրոյ» պատմութեան վերջ որուն վրայ, իբրև ազգային գործիչ չէիք զլացած ձեր անզուգական պատկերն ալ փակցնել—գծրախտաբար ոչ Լօնտօն երկաթագործէ մը գնուած շղթաներով որով կը ցուցադրուիք անզլիացիներուն առջեւ—անշուշտ այս «Ազգային երգերու հաւաքածոն պիտի գար ձեր անպատում հայրենասիրութեան ապացոյցը տալու»:

Ինչո՞ք պատուելի... Ո՞վ ըսաւ թէ այդքան դիւրին էր հայրենասէրի անուն վաստկելը. ո՞վ ըսաւ թէ այդքան ածան կարելի էր գնել: Պատուելի՛ անցա՛ն, անցա՛ն այն հին բարի ատենները՝ երբ հոս ու հոն ըրած միմաստութիւններն էր եւ ձեր ընտանեաց գոյութիւնը ապահովելու համար՝ «հայրենասիրական գովելի» ճիգեր կը նկատուէին. անցա՛ն այն գերբըջանիկ ատենները՝ երբ 20 ֆրանքով «ազգասէր» եւ մատ շարժելով «գործիչ» տիտղոս կառնէին. փոխուած են մամանակները, պատուելի:

Այն ի՞նչ աղբոր պատմութիւնով մը կը սկսիք երգարանը. Այն ի՞նչ սիրուն բացատրութիւն—«Հաստատութեանը սաներս նստած ազգային երգեր կընդօրինակէին, Իրենց առաջարկուեցաւ որ փոխանակ այդ անօգուտ աշխատութեան՝ աւելի լաւ կըլլայ որ այդ երգերը շարեն եւ սպանն որպէս զի թէ իրենց եւ թէ իրենց պէս շատերուն եւ ընդհանուրին օգտակար ըլլայ»...

Օնչո՞ք ետեւ. Անզլիացոց առջեւ «անկեալ, անտէր եւ անօգնական որբերուն հօմը» «Հաստատութեան եւ սաներուն» փոխուեցան հայոց առջեւ...

Բայց ո՞վ են այդ սաները, ո՞վ պարկեշտ ետեւ. ձեր երեք զաւկը ներք թէ՛ Մարտիրոս Փիրան կոչուած ծառայ Յիսուսի Քրիստոսի (Իր իսկ բառերով) որովայնակերտ ապուշը.—այն պնակալէզ հացկատակը, որ Կովկասի մէջ իր Յիսուսեան սուրբ սիրովն զգծրախտ աղջիկ մը յիմարանցի մտայլ միջնորդութիւն զատապարտութիւն յետոյ՝ ձեզ ալ երկնային շնորհներով կը գրէր իր մէկ նամակով՝ թէ՛ «թէկուզ մի պատու չոր հաց էլ տաք՝ զո՞նք կը լինեմ»— թէ՛ չէ՛ այդ ցաւազար հրէշին թողա կաւոր ազգականները: Սակայն թողունք այդ կէտը եւ աւելի էականին

փնջնինք. ինչպէս եւ դեռ ըսելիք չատ կայ. Ամէն մարդ կրնաք խաբել, պատուելի՛, ամէ՛նքը, եւ կրնաք, նոյնիսկ, ստիպել ձեր «սաներուն» որ վկայեն գրածնիդ բայց մեզ, ընկերներս ու զիս, որ ամենէն աղէկ կը ճանչնանք ձեզ, երբէ՛ք: Տղաք ազգային երգեր կընդօրինակեն երգեր... այն ալ ներկայ ըլծիմին ներքեւ...

Պատուելի՛, ունի՛ք ամօթ ըսուածը. ունի՛ք պատուոյ զգացում. խոստովանեցէք անկեղծօրէն... Ազգային երգ... Եւ դուք օրին մէկը, տղու մը երեք տետրակները պատուելի վերջ՝ «ազգային» երգ գրելուն համար՝ չորրորդը սկսած պահուն հայրենասիրութեամբ կը յարձակէիք վրան՝ սպառնալով ձեզքը կոտորել եթէ յանգնի ատանկ «պարագա» բանով ժամանակ վատնել... թի՛ւս...

Մոռցած էք, պատուելի, որ ձեր սրբանուէր մատաղ արգելած էր կիրակի օրերը «ազգային» երգ երգել կիրակին սրբապիծող տեսակ մը «մեղք» ըլլալուն համար, եւ տղոցմէ ոմանց սովորական էր դարձած կիրակի օրերը անօթի կամ կէս անօթի անկնել՝ որպէս պատիժ ձեր սրբանուէր մատաղին գրած օրէնքին դէմ մեղ աւ չ մ ա ն... Մոռցած էք այս բոլորը... Մ. Բ. Փ.

(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Լիւրճի ՈՒՆ 20 Փետրուար

Արգէն քանի մը անգամներ գրուած է ասկէ առաջ, թէ պատմութեամբի եւ թէ ուրիշ լրագիրներու մէջ այն աւարդ գերի մասին որ ունին Եւրոպայի զանազան ծովեզերեայ քաղաքներուն մէջ հաստատուած եւ սըմասար անունը կրող կարգ մը ամենատարիներու անբարոյական արարածներ: Ասոնց գլխաւոր կեդրոնավայրերն են Մարսիլիա, Լօնտօն եւ Լիւրճուլ, այսինքն ճամբան որ Խարբերգէն, Տիգրանակերտէն կամ ուրիշ ներքին քաղաքներէն եկած պանգուխտ գաւառացիները Ամերիկա կը

տանի: Ահա այս խնդրուն կրածները պիտի պարզենք հոս անխիղճ դատարաններու ձեռքէն: Ասկէ քանի մը ամիս առաջ անձնական գործով Կովկասէն Եգիպտոս, Մարսիլիա, Մանչեսթր անցնելով, գրեթէ երկու ամիս մօտ է որ Լիւրճուլ հասայ: Հոս հատակութիւններուն, զորս կուզեմ հրապարակ հանել ի զուշութիւն Ամերիկա ճամբորդողներուն: Այս անարգ անձը, որ ինքզինքը, պանքայի հերոս ճանչուցեց, է, Մամասեան կը կոչուի եւ ընդի խարբերգցի է:

Լիւրճուլ քարեկամի մը տունն է, ուր հանգիպեցայ Մարիամ անուն օրիորդի մը նմանապէս Խարբերգցի, որ Ամերիկա պիտի ճամբորդէր: Այդ օրիորդը յիշեալ Մամասեանի ճիրաններուն մէջ շատ տառապած էր. անկարելի է որ այդ ճիւղին կատարած կամ կատարել ուզած բոլոր լիբութիւնները հոս արձանագրեմ, ու նոյն իսկ չի պիտի հաւատայի թէ մարդկային գազանութիւնը կրնայ այս աստիճանի հասնիլ, եթէ նոյն տան մէջ գտնուող ուրիշ հիւր մը, ինծի շը ցուցնէր նամակ մը գրուած մօր մը կողմէ, որուն 13 տարեկան զաւակը մատաղ զահրեղած էր նոյն այդ Մամասեան կոչուած ճիւղին: Սոնկալի է, որ այդ հէք մայրը փոխանակ մասնաւորի գրելու նամակը, խնդիրը հրապարակապարզէ, որպէսպիսի ամէն մամանակ Ամերիկա ճամբորդող հայ եղբայրները շինան Լիւրճուլի հրէշին ծուղակը:

Ուրիշ շահատակութիւն մը, Դարձեալ հայ օրիորդ մը, Սառանուն, գաւառացի, Պոլսոյ որբանոցը ուսում առած, Ամերիկա ճամբորդած միջոցին, աչքի տկարութեան պատճառաւ կը մնայ Լիւրճուլ եւ կիլիայ Մամասեանի թակարդը: Խնդն օրիորդ

դին զլխուն չի բերածը չի մնար: Երբ Ամերիկայի ազգականները կիմանան ասիկայ ամենախիստ նամակ մը կը գրեն ու կազատեն օրիորդը, բայց ճիւղը նորէն անպատիժ կը մնայ:

Ես անկարող եղայ համբերել և ուզեցի անձամբ տեսնել այդ տխուր հեղուր: Աստի օր մը քանի մը ընկերներով գացինք Մամասեանի պանդոկը—որովհետեւ յիշեալը ճամբորդ ազգայինները լաւ կողապտելու համար պանդոկի պէս բան մը ունի: Սպասեցին կարծեց թէ իր ծուղակը նոր օրսեր ինկած են, ու սկսաւ շոգոքորթել մեզի: Անտեղուանքը չեղանք իհարկէ: Չորս խօսքով պատմեցինք մեր այցելութեան բուն նպատակը և սկըսանք լաւ մը յատկութեամբ: Նոյն միջոցին ներս մտաւ պանդոկը բնակողներէն ուս մարդ մը և սկսաւ գաղտնի Մամասեանի ստակալի արարքներէն: Պէ՞ր նայելով որ ես փոխեաք մըն եմ, կըսէր մարդը, բայց կը հատուցնեմ թէ ձեք Մամասեանին լիբութեանը, ինքքայ Յարն անգամ շը ներ մեզի: Մամասեան կատարած էր ու կուզէր դուրս հանել մեզի: Բայց մենք, բոլոր ներկաներուն առջեւ պայն խայտառակելէ ետքը, սպառնացանք թէ եթէ շատ յառաջ երթայ իր ստոր արարքներուն համար օրէնքին պիտի յանձնենք զինքը, մանաւանդ որ վկաններ շատ ունինք: Կը յուսանք թէ գոնէ քիչ մը խելքը զլուխը կուգայ:

Ս. Վ. Ղ. 21.9.96

ԺՕՐԻՍԻ ԽՆԴԻՐԸ

Արգէն ժամանակին հաղորդեցինք մեր ընթերցողներուն թէ Պոլսոյ վըճառակ աստանը վերահաստատած է եղեռնադատ աստանին տուած մահուան վճիռը Ժօրիսի դէմ: Այս առթիւ եւրոպական զանազան թերթեր սոսա՞ծ են կրկին գրադիլ նոյն խնդրով:

ԷՏԿԵՐ ՈՒՅԼՍ

ԿԱՐՍԻՐ ԷՋԵՐ ՑԱՐԻՉՄԵՆ

ՊԵՏՐՈՍԻ ՆՍԽԱՓՈՐՁԵՐԸ

Իրենց ետին, խնամակալ նախանձառ իր ոյժին, կասկածոտ, կէս մը հակամէտ տեղափոխու ինքզինքը իր անորոշ տէրութեան պերճանքին վըրայ կէս մը ահաբեկ իր գիրքի ահաւոր պատասխանատուութենէն— Սօֆի, քոյրը: Ահա երեքը որ կը կառավարէին Ռուսաստանը,—եւ ինչպիսի՛ Ռուսաստան մը—

Արեւելեան երկիր մը՝ ժողովրդուած անկորով էականերէ, սրունք կը քալէին իրենց տիրոջ հրամանով, որոնք կը հնազանդէին, առանց առարկութեան, զիրենք շուկայ բերող

մարդոց՝ ծախուելու նման արջաններու: Ազնւագետութիւն մը որ Արեւելեան էր.—Արեւելեան մտածումով հազուստով, սովորութիւնով, Մարգիկ՝ որ չէին ծխեր, որոնք իրենց կիները կը պահէին քօղարկուած, որոնք աւելի Արեւելեան էին քան թիւրքերը և անշուշտ պակաս լուսաւորեալ:

Այս բոլորը կը տեսնէր Պետրոս, գահին վրայ անհանդարտ, հաշու առնելով երկիրը. անսանձ յայրատութեանց յիմար ըրողներու միջնամիջոցին, տեսնելով իր տխար եղբայրը և արդէն զատապարտելով զայն, արհամարհոտ իր յոյակապ խիղճնամակայ քրոջ հանդէպ:

Երկար շը տեսց իր որոշումը. եթէ յիբաւի կար երբէք ըրողէ մը իր ըովանդակ կեանքին մէջ, որ վճռած ըլլար խնդիրը Հեռացաւ գահէն, և զնայ գործելու արագօրէն, անշեղ

կերպով և ճարտար կատարելութեամբ մը: Իվան գահազրկուեցաւ: Սօֆիա զրկուեցաւ վանք մը: Այդ բոլորը գիրքին էր Պետրոս տարակոյս չունէր երբէք արգիւնքին նկատմամբ: Իր բարձրացման առաջին օրէն գիտէր թէ՛ ըլլով զիլաւոր մտածողը: Յար էր իրաւամբ, և իր այս ինքնայազ յարաբերութեանց լքումը զիպուած մըն է լոկ՝ անարժան տարակոյս՝ ատոր հետեւութեան մասին:

Պետրոս միայնակ կը նստէր իր փառաց մէջ Սօսիոյաւ: Ռուսիա անկազմակերպ էր, մտամբ իր ընդարձակ հեռուորութեան պատճառաւ, մասամբ որովհետեւ քաղաք իր բնական վիճակն էր որբկէ երբէք դուրս չէր բերուած Ռուսիա, նոյնպէս, քան ձէր: Խորագէտ, ծանրապէս քնած՝ ոչնչութեան մէջ խրուած փողովորդի մը հանդարտ համակեր-

պութեամբ: Պետրոս արիւնցուց Ռուսիան: Ասոր համար վաստակեցաւ ան «Մեծ» մականունը: Ո՛չ ձեռքի ազնիւ ճրնչումով կամ խրատի քաղցր խօսքով, կամ երգով ու երեւոյթութեան շօինգով:

Արիւնցուց Ռուսիան վերաբոյժի զանակին հատուածով,—ամա թէ օս վերաբոյժի, Փոքր նոր էր Պետրոսի համար, Չարթուումին կակիժը սրեց իր նորութեան ախորժակը ու կրկին ու կրկին իւրեց:

Եթէ կար մեթոտ մը իր յիմարութեան մէջ, ժխտական տեսակէն էր եթէ սկսաւ ան բարեկարգել իր կայսրութիւնը ու եւ ի սխտէմով, զա հաստատուած կարգի սապարման վրայ էր հիմնուած:

Ուրազ, հրովարտակ և յայտարարութիւն բարեկարգեցին Ռուսիան: Մարգիկ որ մօրուսաւոր էին՝ հրա-

Ուշագրութեան արժանի են մասնաւորապէս «Թայմզ»-ի երկու երկար յօդուածները այս նիւթին վերաբերմամբ...

Միւս կողմէ մեր Արմենիայ արտառայած է «Ալեմաֆոր»-ը Մարտի 11-ի Պոլսոյ մէջ թղթակցութիւնը...

Անցեալին մէջ գոյութիւն ունեցող զէպեքերը, կը գրէ Ալեմաֆորի թղթակցիցը, կը հաստատեն արդարեւ թէ Բ. զուր պահանջած է որ Եւրոպացի ոճրագործները իր դատարաններուն մէջ զատուին...

Մայրցամաքի անկախութեան հարցը, որ արդիւնաւոր էր անհաւան պատիժներով, ուժաւորով մը կիրառութեան գործեցաւ...

Եթէ չեն կրնար պարել, տիկին, ես ինքս պիտի սովորեցնեմ զեղ, Այսպէս պէտք է զննես ոտքը — եւ այսպէս — ու այսպէս:

Ու Պետրոս քրտաւթոր իր ճիգերուն հետքով, քաջելով Արքունի մեծագոյն տիկինը մը վայր մը, ձեռնարկէր մը — փայտ մը կը կրէր՝ զատուցելու ազոյնս ցոյց տալու համար...

Պէտք է խոստովանիլ նաեւ որ պեղծիական կառավարութիւնը խնդիրը բաւական ձախող կերպով բռնեց...

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՇՈՒԻՐՁԸ

Թուականէս գրեթէ ամիս մը առաջ Անգլիացի մը, անգլիներէն լեզուով հրատարակ նետեց շրջաբերական նամակի ձեռնով գրութիւն մը...

Բնութեան ալ պատճառով այդ գիրքն ալ անհաստիւն դրութեան կարիք տակաւածին վրայ գինով փոռեցան:

Այս էր Պետրոսը: Կատարեալ ամէն բանի մէջ — տխմար կոպիտ անձ մը, տգէտ նախապատրուած, զտղանարտոյ, այլ կատարեալ: Իր քմահաճոյքներուն ստրուկը, էակը ամէն անցնող երեւոյթի անսով, — բայց և կատարեալ:

Դ Ա Ն Ի Ճ Ն Պ Ե Տ Ր Ո Ս

Նէլլըր նկարած է Պետրոս Ա. ի մէջ նկարը. կրնաք տեսնել այդ Հէմբըրքի միջոցով մէջ և Պեղածնօտ, ինքնակամ տղայ մը կերեւի: — Երկայնահասակ երեքով լիւրով, միջոց անհնարաւ ալ ձեռքով և կոծիծով մը զէմբըն վրայ իրեն տրուած նկարագրութիւնն է, բայց զեռ կան ուրիշներ, որ կօցնեն ձեզ լաւագոյնս ճանչնալու սոյն Պետրոսը:

Երբութիւն չպիտի տայի եթէ չմտածէի թէ այդ գոնիկ շրջաբերական նամակն որ անգլիական գաղթականութեան մէջ իսկ ցրուեցաւ, այդ հասարակութեան մտքին մէջ կրնայ անհեթեթ հետեւութիւններ յարուցանել եւ կիրքեր ծնուցանել ամէն մէկ հայ անհատի զէմ և հետեւաբար արող ինչ հայ ազգութեան զէմ, նկատելով որ մարդիկ լաճախ իրենց կարգապահ նիւթին տպաւորութեան տակ կը մտնան, առանց կարենալ դատելու:

Գոհունակութիւնը ունիմ ներկայիս իմացնելու թէ առ Լորտ Բրոմֆր մատուցուած բողոքագիրը Անգլիական հիւպատոսարանի յանձնուած է ի նկատառութիւն, իսկ վերոյիշեալ հայ անհատն ալ իւր կողմանէ մասնաւորապէս եղեռնական գատ մը բացած է նոյն անգլիացիին զէմ անգլիական հիւպատոսարանին առջեւ եւ իւր գատին՝ ինչպէս նաեւ հայութեան եղած անարգանքին պաշտպանութիւնը յանձնած է Անգլիացի փաստաբան մը: Այդ կը յուսամ թէ այդ մարդը իւր արժանի դասը պիտի առնէ, ինչպէս երբեմն իւր ալ ու ձախ ըրած յախուռն յարձակումներուն համար առած էր, Բայց եթէ երբէք կարենայ անպատիժ իսկ պրծիլ չեմ զարմանար, վասնզի իւր զէմ բացուած գատին մէջ իր պաշտպանն է ձանձօթ փաստաբան մը... որ հայ է, Տրար Յակոբ Ասատուրեան:

Վ. Համաձեռն (Լուռուբեր)

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆՍԽԱՂԻ

ԿԱՐՄԻՐ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆՆԵՐԸ կամ

Հ Ա Յ Ո Ւ Ն Խ Ա Չ Ը

Իրական թատերախաղ 5 արար. Ձանազան պատկերներով

Հեղինակ Տիգրան Գալ: մճեան

Սոյն թատերախաղը որ յեղափոխական դիմակի տակ կարգ մը ստոր կեղծարարներու իսկական պատկերներ կայացնելէ զատ՝ նաև իրենց կատարած պիտակ արարքները կը մատնանչէ, և որուն ամենէն ահու լին եղբայրը բուն իսկ իւր հարազատ եղբայրը կը սպաննէ, հեղինակը տեղի ունեցած իրական զէպեքէ քաղած և ըստ այնմ թատերախաղի վերածած է, նպատակը եւ նիւթը ոչ

տած չէ՝ զայն յղկելու, կեղտոտ ունակութիւններ ունէր, կոպիտ վարմունքներ, անբարոյական մտութիւններ և վրայէն գինեատան զուլիկ հոտը կուգար, Ընտիր նամակ մը կայ Հանօվրի Սօֆիա Շարլօզէն գրուած, որը, հետաքրքիր զայն տեսնելու, կը գրէր իւր նախարարին: — «Կուզէի որ համոզելիք զինքը հոս գալ, ո՛չ թէ տեսնելու, այլ տեսնուելու, եւ մենք յօժարօրէն պիտի պահէինք առհասարակ հազուադէտ անասուններու վրայ վատնուած գըրամը՝ այս առթիւ ծախսելու, թէ պէտեւ մեծ թշնամի մըն եմ ապտեղութեան, հետաքրքրութիւնս չպիտէ անելի է ինձ համար»

Նախորդ հատուածիս մէջ ըսի թէ պատմիչներ անորոշ են Պետրոսի ծննդեան մասին, նա չէր նմաներ իր հօր Ալէքսիսի որքան որ հնար է երեւակայել, Ալէքսիս փոքրամարմին

մէկ կուսակցութեան զէմ պայքար կը մղէ այլ միահամուռ մտութեան պէտքը կը զգացնէ պատկերացնելով անմիարանութեան յառաջ եկած շարքերը: Հեղինակը կը փափաքի սիրող անձերու մասնակցութիւնը սոյն ներկայացման, ստանձնելով իրենց կարողութեանը յարմարելիք դերերը, ներկայացուց տեղի պիտի ունենայ մեծ պահոց չորրորդ շարքուն:

Ե Ր Ջ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Հայ ոչ-յեղափոխական ընկերութեանց Վարչական Ժողովներուն

Բոլոր ոչ-յեղափոխական ընկերութեանց մէջ յարաբերութիւն հաստատելու և ապագային նոյն իսկ պատգամաւորական ժողով գումարելու գիւրութիւն ընծայելու համար, Բարիկ Հայ Աշխատ. Միութեան Վարչական Ժողովս կը խնդրէ բոլոր ոչ-յեղափոխական ազգային ընկերութեանց վարչական ժողովներէն որ, եթէ կարելի է, մինչեւ երկու ամիս, բարեհաճին իրեն զրկել իրենց պաշտօնական հասցէն եւ մէկ օրինակ կանոնագիր:

Վարչական Ժողովս հրատարակութեան պիտի տայ իրեն հասած ընկերութեանց անուններն ու հասցէներն ի գիտութիւն բոլոր միւս ընկերութեանց և պիտի զրկէ ամէնուն մէկ օրինակ իրեն կանոնագրէն:

Միութեանս հասցէն է —

Առ պարոն Նախագահ Բարիկ Հայ Աշխատաւորաց Միութեան, 96 պըտփիքփիա Բարիկ Հայ Աշխատ. Միութեան Վարչական Ժողով 26 Յունվար 1906 (Կնիք)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նշանակուած յանձնաժողովը, որ պաշտօն ունի 1900 ին կընքուած թրքա-պուլկարական մաքսային համաձայնութիւնը վերաքննել, քիչ օրէն Պոլիս համախմբուելու է:


Պոլկարիոյ կողմանէ որպէս պատուիրակ նշանակուած են Պուկով, Չաքալով, Բաչո Գ. Գոսէվ և Կէրմանօր, իսկ Թուրքիոյ կողմէ

էր եւ հիւժեալ. Պետրոս երկայնահասակ էր, հոժկու, թիկնեղ, երկաթէ գնդիրներով, իր ծագումը շատ քիչ կը զբաղեցնէր ինքը, սակայն անգամ մը, կէս գինով, մեծափափաք կոխ մը յառաջացնելու, դառնալով բորբոքուած՝ Դիհօն Սղրէշնիէվի, իր մօր սիրականին:

— Այդ անձը, գոչեց, խուճէն մկուռն, Իվան Մուսին-Բուշքիին ցոյց տալով, գիտէ, ամէն պարագայի տակ, թէ իմ հօրս զաւակն է... Որո՞նք զաւակն եմ ես, — քուզկը, Դիհօն, Հնազանդէ՛ ինձ, իօսէ՛, ու բանէ մը մի՛ վախնար, խօսէ՛, ապա թէ ոչ խնդրել կուտամ զեղ:

— Գթութիւն, հեկեկաց, չեմ գիտեր ի՞նչ ըսել... ես միակը չէի...

(Շարունակելի)



նշանակումներու մէջ կան Հասան Թէթմի բաշան և Հագգը պէ- յը :

Հասան Թէթմի բաշան թուրք ազգեցիկ կառավարչապետներէն մին է, և Սուլթանի վստահութիւնը կը վայելէ: Նա ծանօթ է նաև որպէս թուրք գրագետ օրէնսդէտ: Նա կառավարական խորհրդի անդամ ըլլալէ առաջ, Սելանիկի կուսակալն էր, անոր ժամանակը տեղի ունեցան Սելանիկի ցոյցերը: Անոր հրամանով հազարաւոր պուլկարներ ձերբակալուեցան և Սելանիկի բանտերուն մէջ նետուեցան: Նա բնաւ չը սիրեր պուլկարները, և ամենայն անվստահութեամբ կը նայի Պուլկարիոյ վրայ: Այսու նա անկեղծ, կարուկ և ուղղամիտ նկարագրի տէր մարդ մըն է կը սեն:

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

**Ք Ո Ւ Ր Ք Ի Ա**

Պօլսէն կիմացնեն թէ՛ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը, նաևատորմի մը զրկելու է տաճկական ջուրերը, Պէյրուսի առջեւ ցոյց մը ընելու նպատակով:

Ամերիկեան կառավարութիւնը այլևս իր յոյսը կտրած է: Շատ մը առկախ խնդիրներու կանոնադրուած վերջանալու մասին, այս խնդիրներու մէջ է միանգամայն Ամերիկեան դպրոցներու վերաբացուելու և ամերիկեան քարոզիչներու Հայաստանի մէջ ազատ ու համարձակ շրջագայելու ծանրակշիռ հարցը, ամերիկեան անցագիր ունեցող մարդիկներուն ամերիկեան հպատակ ճանչցուիլը, ինչպէս նաև Պօլսոյ Ամերիկեան գործակառարութեան գեղարարութեան վերածուելը: Բ. Դուռը շատ խռոված է այս յարցուցումը հարցէն, որ կուգայ ուրիշ անհատներու հարցերու աղ ու պղպեղ ըլլալ:

Փարսիական Նահանգի մէջ ծագած խռովութիւններու պատճառ եղած են, ասիկէ երկու տարի առաջ, Ալպանական շարժումի հետեանօք, այս նահանգի մէջ աքսորուած Ալպանացիները: Թաղապետութիւնը վերահաստատելու համար, Սուլթանը հոն աքսորուած ալպանացիներուն արածած է վերադառնալ իրենց երկիրը:

**Բ Ո Ւ Ս Ի Ա**

Ամսոյս 13 ին Հոլլանդիոյ Գոստաարստիկանական մէջ գողութիւն մը եղած է որ իր տեսակին մէջ եղական կրնայ սեպուել:

Չորս մարդիկ, մինչեւ հիմայ անյայտ, կերթան գրամատուը

գրամ փոխելու: Ասկէ քիչ մը վերջը տաննակ հոգիներ կը մտնեն նոյն բաժանումին մէջ և կը սկսին ուսերէն պոռալ: Պիանուն յեղափոխութեան, ո՛չ ոք տեղէն չը շարժի և ամենքը իրենց ձեռքը դէպի վեր բարձրացնեն՝ այն ատեն առջի շորս մարդիկը կը միանան նորահասերուն, անոնցմէ շորս հինգ հոգի տեսուչին սենեակը կը մտնեն, անոր ձեռքերը կը կապեն և իրենց վեցհարուածեանները կը գարձեն անոր վրայ: Սպասուորները միկուսի սենեակի մը մէջ տարուելով հոն կը բանտարկեն, այս սենեակի դրան առջեւ ումբ մը կը ձգեն, պաշտօնեաններուն կազմարարեն, չըլլայ որ փորձեն փախչիլ, առջի փորձին ումբը պայթելու է: Սպասուոր մը որ Տեսուչին սենեակը մտնել փորձած է, անմիջապէս կը սպաննուի: Ասկէ յետոյ այս խմբակը սրտի ամենայն հանգարտութեամբ կը կողոպտէ գրամարկը, յորում 180,000 ռուպի կայեղեր, և առանց վերդովելու կը հեռանայ:

Մերակուտին ուղղուած կայսերական հրամանագիր մը Տումայի գումարման օրը, 27 ապրիլը կը նշանակէ:

Սէմէնովսքեան պահակազօր գնդի, գնդապետ Ռիմանը, Մոսքովեան պահակազօր գնդի հրամանատար անուանուած է, Մոսքովայի յեղափոխութիւնը մտնելու համար մատուցած ծառայութիւններու փոխան:

Սուլթան լրագիրը կը հաւաստէ թէ՛ այս օրերս կայսերական հրովարտակ մը հրատարակուելու է, որով կը շնչուի մահուան պատիժը և բոլոր քաղաքական յանցանքներու ներումն կը շնորհուի:

Ինքիօյէ կիմացնեն թէ՛ Վլատիմոսովի մէջ, Միշտենգսզօրավարին հրամանատարութեան տակ գտնուող 10,000 թուղքներ պատամբեր են, և կը սպաննան զինքը մեռցնել, եթէ Ռուսիս վերադառնալ ու ազատ իրենց տները երթալ, չը թոյլատրուի:

Վլատիմոսովի մէջ լուր կը շրջի թէ՛ ճաբանացիները գարնան նոր զինուորներով պիտի փոխանակեն Մանչուրիոյ բանակը: Այս լուրը հոս բաւական անհանգստութիւն կը պատճառէ:

Նիւ Եորք ժուրնալ լրագրի Բեթերսպուրկեան թղթակիցը կը հաղորդէ թէ՛ Թամիր Եագէվր Յարսքօէ Սէլօ գացած է, անձամբ բացատրութիւն տալու իր հրատարականի մասին, նա յայտարարած է որ անվերջ բռնարարութիւններով (Իուսիոյ) կործանման պատճառ չը կրնար ըլլալ:

Նա խնդրած է որ, կառավարական խորհրդի մէջ իր տեղը ուրիշ մը նշանակեն: Թամիրեան զէվր և Գուգլէրի հրամարիլը ամբողջ ուսական մամուլը կը զբաղեցնէ: Յետագիմականներու օրկանները, բնաւ չեն ցուիր այս հրամարականի մասին: Մոսքովքեա Վէտովսովի լրագիրը Գուգլէրի մասին խօսելով այսպէս կըսէ:

Գուգլէրի նման թունդը կերպարականներու կառավարական գործունէութիւնը և ոչ մէկ կառավարութեան մէջ թոյլատրուի է: Ասկէ վերջ մէկ անգամ ընդ միշտ Գուգլէրի համար կուսակալական պաշտօնէութիւնը փակուած պէտք է ըլլայ, Երկիրը պիտի խաղաղի և յուզուի կը դադրի այսպիսիներու պաշտօնէն հեռանալով:

Իսկ ասոր բոլորովին հակառակ գաղափար կարտայայտէ, Ռուսքեա Վէտովսովի լրագիրը:

Թամիրեանզէվրի հրամարուելուն պատճառը, դահլիճին յետագիմականուողութենէ զատ Տումայի գործաւորական հարցի մասին բռնած ընթացքն է:

Վրթթէի հետ ունեցած խօսակցութեանց մը ժամանակամիջոցին, Բէրցովը հարցուցած է Վրթթէին թէ՛ ինչո՞ւ համար Տումայի ընտրութիւնները հիմայ չեն կատարեր, քանի պիղապիները ազատ են դաշտային աշխատութենէ: Նա շատ շահեկան պատասխան մը տուած է, շիմակուհիմայ պատասխանած է կոմսը, Ռուսիոյ մէջ միմիայն յեղափոխական կուսակցութիւնները կը գործեն, իսկ շափաւորեանները կը փայլին իրենց անգործունէութիւնով, ուստի եթէ ընտրութիւնները հիմայ ըլլան թէ՛ ընտրուցները և թէ՛ երեսփոխանները մինչեւ Տումայի գումարումը յեղափոխականներու դատաւր պիտի ըլլան և այսպէս վերջին հաշուայարգարութեան ժամանակամիջոցին Տումայի կաղմուածքը յեղափոխական պիտի ըլլայ: Ահա թէ ինչու համար ընտրութիւնները հիմայ չեն կրնար տեղի ունենալ:

**ԱՆՊԻՒԱ**

Էտուարտ Թագաւորը անպաշտօն Բարիկ չպիտի երթայ, նա այս գիշեր կը հասնի Բարիկ և շատ հաւանական է որ մինչեւ երեքշաբթի հոն մնայ, թէ՛ ինչո՞ւ թագաւորը Բարիկ կերթայ տակաւին չը գիտցուիր, սակայն շատ հաւանական կը թուի որ նա Թալէրի հետ պիտի տեսակցի: Թագաւորը Բարիկէն Պիարից պիտի երթայ:

Այս այցելութիւնը կապակցութիւն ունի կըսեն, Ալթէզիրասի

մէջ վերջին օրերս տեղի ունեցած միջադէպի հետ:

**Չ Ի Ն Ա Ս Ա Ն**

Միացեալ Նահանգներու հիւպատոսը Շանկայէն կը հեռագրէ թէ՛ Նաչիլիկ և Գիէնչանկի բռնակցութիւնը տեղւոյն ամերիկեան գաղթականութեան վրայ յարձակած է, Երկու մադ և երկու կին սպաննուած են: Թընգանթակիր շոգենաւ մը Նանգիլիկ ուղարկուած է, Անգլիական գաղթականութիւնը անփոս ազատած է:

Սէյլի թէլէկրաֆ լրագրի թղթակցին համաձայն—Թոքիօյի քաղաքական շրջանակներու մէջ լուր կը շրջի թէ՛ Չինաստանը, Չին—առու բանակցութեանց լսննալէն ետքը, Անգլիայէն Վէյ—Հալլէյի պարպումը պիտի պահանջէ:

Հաւանական կը թուի թէ՛ սյսորուան Անգլիոյ պատական դահլիճը Չինաստանի այս խնդիրքը չը պիտի մերժէ, որոհեալ Բորթ—Արթուրին առական տիրուպետութեան ճիշտներէն խելէն վերջը, Անգլի—Վէյ—Հայ—Վէյի պէտք չուտի որպէս ծովային գործառնութեան կայան: Այսպէս ինքնին պիտի ծագի և այն հարցը թէ՛ Գերմանիան ալ իր խլած Յեաօ—Չէօ նաւահանգիստը վերագարձելու է Չինաստանին:

Հոնգոնկէն կիմացնեն թէ՛ Չինաստանի Մայր Կայսրուհին մեռած է:

**Մ Ա Ր Ո Ք**

Ալթէզիրասէն հասած լուրերու համաձայն, համայն շովոյ պատուիրակները հատած են, որովհետեւ Պասինչպէս նաև ոստիկան խնդրի մասին ո և է եզրակացութեան մը չին կրցած յանգիլ: Այլ ևս ոչ ոք կը հաւատայ համաձայնութեան մը իրաւաստանուն: կը կարծուի թէ՛ քիչ օրէն համաժողովը փակուելու է: Պարսոյի և Գերմանիոյ միջեւ պատերազմը անխուսափելի կը նկատուի:

**Ն Ա Ս Ա Կ Ա Ս Ո Ւ Փ**

Նիւ Յորք Գ.—Սաղանք գրամը ի հաշիւ 905 տարուան: Թերթը կը զրկուի ձեր հասցէին:

Ֆիլիպէ Մ. Ն. ստանդարտ մինչեւ 906 յունվար 7. կորսուած թերթերի կուղարկուի: Լիվրու. Ս. Վ. տուած հասցէին թերթը կուղարկենք այս համարէն սկսեալ:

Բաժանորդագրութեան պայմանները նշանակուած են թերթի վերեւը: